ԲԵԱՏՐԻՍԱ ԿԱՐՊԻՍԻ ԿԵՈՎՏԵՐԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը կարևոր նշանակություն ունի ցանկացած երկրի տնտեսության զարգացման և հասարակության կենսամակարդակի բարելավման համար: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնախնդիրներին անդրադառնալիս, առաջին հերթին, անհրաժեշտ է հստակ որոշել, թե ինչ է իրենից ներկայացնում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և փորձաքննությունը**:**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (այսուհետ՝ ՇՄԱԳ) մասնագիտական գործունեություն է, որը հիմնված է գիտականորեն մշակված և նորմատիվ ամրագրում ստացած մեթոդների և չափանիշների վրա, իսկ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխման նպատակով փորձաքննությունը ընկերությունների կողմից նախատեսվող գործունեության համապատասխան ստուգումն է պահանջներին: Ազդեցության փորձաքննություն կարող է իրականացվել միայն ազդեցության գնահատականի հիման վրա, այսինքն՝ սահմանված կարգով ազդեցության գնահատական տրվելուց հետո միայն:

Կարևոր է նաև իրավաբանորեն հստակ սահմանել, որ ՇՄԱԳ-ը փորձագիտական նշանակություն և արժեք ունեցող փաստաթուղթ է, իսկ ՇՄԱՓ-ը՝ վարչական ակտ, որը ենթակա է սահմանված կարգով, այդ թվում՝ դատական կարգով բողոքարկման: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը փաստաթղթերի այն փաթեթն է, որում ընդգրկված է նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ ամբողջական և համապարփակ տեղեկատվություն՝ նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության բոլոր տեսակների, այդ ազդեցության համաչափության և թույլատրելիության, տեխնիկական հնարավորությունների և այլ հարցերի վերաբերյալ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը առաջացել է անգլերեն EIA հապավումից (EIA՝ Environmental Impact Assessment) և կիրառվում է որպես Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման միջազգային միության (IAIA, International Association for Impact Assessment[1]) եզրույթ: Վերջինիս միջոցով հիմնավորվում է շրջակա միջավայրի և հասարակական առողջության վրա պլանավորվող տնտեսական գործունեության ցանկացած տեսակների ազդեցության վտանգավորության աստիճանի և ինտենսիվության բացահայտումը: Կարելի է ասել, որ ՇՄԱԳ-ը վերաբերում է այն ուղղությանը, որն ունի նախագծերի գնահատման ընդհանուր «հովանոցային բրենդ»: ՇՄԱԳ-ի անցկացումը պլանավորվող տնտեսական և գործունեության այլ տեսակների համար նախատեսվում է «Էկոլոգիական փորձաքննության մասին» օրենքով, ինչը Հայաստանի Հանրապետությունում կոչվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք[2]: Նշված օրենքի հոդված 4-ի համաձայն, այսպիսի փորձաքննության նպատակն է կանխորոշել, կանխել կամ նվազեցնել գաղափարի և պլանավորված գործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, ինչպես նաև տնտեսական ու սոցիալական բնականոն զարգացման վրա: Բացի այդ, օրենքը նախատեսում է փորձաքննության ենթակա գործունեությունների ցանկը:

Պետք է նշել, որ ՇՄԱԳ-ը նպաստում է էկոլոգիապես խելամիտ կառավարչական որոշումների ընդունմանը, ինչպիսիք են՝ նախատեսվող տնտեսական և գործունեության այլ տեսակների իրականացման հնարավոր անբարենպաստ ազդեցությունների որոշումը, էկոլոգիական

---

[1] http://www.americanbar.org/content/dam/aba/publications/natural_resources_environment/Winter%202016/NRE_v030n03_feat01_Cullen.authcheckdam.pdf

[2] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք: ՀՕ-110-Ն: ՀՀՊՏ 2014.07.30/41(1054):

հետևանքների գնահատումը «հասարակական կարծիքի» չանտեսումը, «ազդեցությունների նվազեցման և կանխարգելման» միջոցառումների մշակումը և այլն[1]:

Փորձենք ավելի մանրամասնորեն անդրադառնալ այդ մասնակիցներին: ՇՄԱԳ-ի գործընթացում մասնակցում են պատվիրատուն, ազդեցության գնահատման աշխատանքների կատարողը և հասարակայնությունը[2]:

- **Պատվիրատուն** ֆիզիկական կամ իրավաբանական անձ է պատասխանատու նախատեսվող գործունեության փաստաթղթերի պատրաստման համար ՝ համաձայն նորմատիվային պահանջների, որոնք ներկայացվում են տվյալ գործունեության տեսակին՝ էկոլոգիական փորձաքննության անցկացման դեպքում:
- **Կատարողը** ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որն իրականացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը, և որին պատվիրատուն իրավունք է տվել կատարել գնահատման աշխատանքները: Կատարողը պատասխանատու է գնահատման ամբողջականության ու հավաստիության, ինչպես նաև դրանց՝ էկոլոգիական ստանդարտներին ու նորմատիվներին համապատասխանության համար:
- **Հասարակայնությունը** կարող է գործընթացի մեջ ընդգրկվել սկզբնական տեղեկատվության տրամադրման և ՇՄԱԳ-ի անցկացման փուլերում, մասնակցել հասարակական լսումներին և քննարկումներին:

Բացի այդ, կարևոր հարցադրումներից են նաև ՇՄԱԳ-ի սկզբունքները[3]՝

- ՇՄԱԳ-ի՝ որպես լուծումների ձևավորման գործիքի կիրառում,
- նախագծի տեխնոլոգիական, տեխնիկական, սոցիալական, բնապահպանական և տնտեսական ցուցանիշների համալիր դիտարկում,
- նախագծային լուծումների այլընտրանքայնություն, նոր տարբերակների մշակումը,
- օբյեկտի շահագործման հետ կապված հնարավոր բացասական հետևանքների համար պատվիրատուի պատասխանատվություն:

Ինչպես հայտնի է, պատվիրատուն կրում է ՇՄԱԳ-ի կատարման հետ կապված բոլոր ծախսերը և ՇՄԱԳ-ը ներառում է՝

1. տարածքի ռեսուրսային ներուժի և շրջակա միջավայրի վիճակի որոշում,
2. ՇՄԱԳ-ի ծրագրի մշակումը,
3. տնտեսական գործունեության և շինարարության այլընտրանքային տարբերակների գնահատումը,
4. շրջակա միջավայրի վրա նախագծի շահագործման հետևանքով ազդեցության ծավալի և տևողության գնահատումը,
5. շրջակա միջավայրի վրա նախագծի ազդեցության մոնիթորինգը,
6. շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության մակարդակի նվազեցման միջոցների և միջոցառումների համակարգի ստեղծումը,
7. հասարակական լսումները և էկոլոգիական փորձաքննությունը,
8. շրջակա միջավայրի վրա նախագծի ազդեցության վերլուծության հաշվետվության պատրաստումը:

Համաձայն Շրջակա միջավայրի վրա միջազգային կազմակերպության մեթոդաբանության՝ ՇՄԱԳ-ի գործընթացը բաղկացած է հաջորդական փուլերից[4].

1. ***սքրինինգ*** (screaning), որի շրջանակներում որոշվում է ՇՄԱԳ-ի անցկացման անհրաժեշտությունը և լիարժեքության աստիճանը,

---

[1] Худолей В.В., Мизгирев И.В. 1996. Экологически опасные факторы. СПб, Изд-во АОЗТ УПФФ, 186 с.

[2] Авалиани С.Л., Ревич Б.А., Захаров В.М. 2001. Мониторинг здоровья человека и здоровья среды. М., Центр экологической политики России, 76 с.

[3] Позняков С.П., Румак В.С., Софронов Г.А., Умнова Н.В. 2006. Диоксины и здоровье человека. Научные основы выявления диоксиновой патологии. СПб, изд-во «Наука», 275 с.

[4] Большаков А.М., Крутько В.М., Пуцилло Е.В. 1999. Оценка и управление рисками влияния окружающей среды на здоровье населения. М., Изд-во «Эдиториал УРСС», 254 с.

2. ***սկոպինգ*** (scopping), այս փուլում վեր են հանվում խնդիրները և ազդեցության ոլորտները, ինչպես նաև՝ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը,
3. ***այլընտրանքային տարբերակների գնահատում***, ինչի արդյունքում ընտրվում է նախատեսված նպատակներին հասնելու այն տարբերակը, որն առավել բարենպաստ է շրջակա միջավայրի համար
4. ***ազդեցության գնահատում***, որը ենթադրում է նախագծի իրականացման էկոլոգիական, կենսաբանական և սոցիալական հետևանքների աստիճանի կանխատեսում և որոշում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում վերլուծվում են ազդեցության քանակական ցուցանիշները, մասնավորապես.

- ազդեցության ինտենսիվությունը՝ միավոր ժամանակում աղտոտիչների հոսքը,
- ազդեցության որոշակի ուժգնություն՝ միավոր տարածքի վրա աղտոտիչների հոսքը,
- ազդեցության հաճախականությունը ժամանակի ընթացքում՝ ընդհատ, անընդհատ, միանվագ ազդեցությունը
- ազդեցության տևողությունը՝ տարի, ամիս և այլն,
- ազդեցության տարածական սահմանները՝ խորություն, չափեր և ազդեցության գոտու ձև:

5. ***Շրջակա միջավայրի վրա ազդեցության կառավարում***, որն իրականացվում է միջոցառումների սահմանման միջոցով՝ ուղղված նախագծի շահագործման անբարենպաստ հետևանքների վերացմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանը :
6. ***Նշանակալիության գնահատում***, որի հիման վրա իրականացվում են շրջակա միջավայրի վրա այլ բաղադրիչների ազդեցության կարևորության և ընդունելիության որոշման գործընթացները, օրինակ՝ այն գործընթացները, որոնք հնարավոր չէ վերացնել: Այս փուլի նպատակը առաջնահերթ ազդեցությունների նվազեցումն է՝ ընտրելով միայն նրանք, որոնք բնութագրվում են առավելագույն ինտենսիվությամբ և պարբերականությամբ: Այստեղ հաշվի են առնվում այն ցուցանիշները, որոնց դեպքում ազդեցությունը նշանակալից է[1].

- տվյալ տարածքի վրա զգալի ազդեցությունը,
- հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունը,
- չափազանց վտանգավոր արտադրությունը:

7. ***Հաշվետվությունների կազմում***՝ ՇՄԱԳ-ի անցկացման վերաբերյալ:
8. ***Որոշումների ընդունում***՝ նախագծի ընդունման դրական կամ բացասական եզրակացություն, ինչպես նաև իրականացման վերաբերյալ պայմանների սահմանում:
9. ***Հսկողություն*** նախագծի իրականացման վերաբերյալ սահմանված պայմանների կատարման նկատմամբ, վերահսկողություն նախագծի իրականացման նկատմամբ, ինչպես նաև նախատեսվող միջոցառումների՝ բացասական հետևանքների նվազեցման արդյունավետության նկատմամբ:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք նշել, որ ՇՄԱԳ-ը ներառում է ելակետային իրավիճակի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում նաև չափումների և վերլուծությունների անցկացում, նախատեսվող տեխնոլոգիական գործընթացների բոլոր փուլերի (ներառյալ՝ կոնսերվացիայի և դեմոնտաժի)՝ շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա ազդեցության որոշում, այլընտրանքային տարբերակների վերլուծություն, շրջակա միջավայրի վրա ազդեցության արդյունքում առաջացած տնտեսական վնասի հաշվարկում, բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների (մոնիտորինգի) ծրագրերի մշակում և այլն:

[1] Кучма В.Р., Гильденскиольд С.Р. 1995. Окружающая среда и здоровье жителей города с развитой промышленностью. МО, Изд-во «Олег и Павел», 123

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԲԵԱՏՐԻՍԱ ԿԱՐՊԻՍԻ ԿԵՈՎՏԵՐԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Համառոտագիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը ներառում է ելակետային իրավիճակի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում նաև չափումների և վերլուծությունների անցկացում, նախատեսվող տեխնոլոգիական գործընթացների բոլոր փուլերի (ներառյալ՝ կոնսերվացիայի և դեմոնտաժի)՝ շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա ազդեցության որոշում, այլընտրանքային տարբերակների վերլուծություն, շրջակա միջավայրի վրա ազդեցության արդյունքում առաջացած տնտեսական վնասի հաշվարկում, բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների (մոնիտորինգի) ծրագրերի մշակում և այլն։

Բանալի բառեր. *շրջակա միջավայր, էկոլոգիական փորձաքննություն, մարդու առողջություն, պատվիրատու, իրավաբանական անձ, ֆիզիկական անձ, էկոլոգիական ստանդարտներ, նորմատիվներ:*

ПРОБЛЕМЫ ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ

БЕАТРИСА КАРПИСОВНА КЕОВТЕРЕЛЯН
соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Оценка воздействия на окружающую среду включают в себя исходные исследования, а также, в случае необходимости, проведение измерений и анализов, определение воздействия на окружающую среду и здоровье человека всех этапов (включая консервацию и демонтаж) намечаемых технологических процессов, анализ альтернативных вариантов, расчет экологического ущерба, возникшего в результате воздействия на окружающую среду, разработку программ экологического управления и мониторинга и т.д.

Ключевые слова: *окружающая среда, экологическая экспертиза,, здоровье человека,заказчик, юридическое лицо, физическое лицо, экологические стандарты, нормативы.*

ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT ISSUES

BEATRISA KARPIS KEOVTERELYAN
Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The environmental impact assessment includes baseline studies, and if necessary other measurements and analyses that need to be carried out; figuring out the impact of all stages of expected technological processes (including the conservation and dismantling) on the environment and human health; analysis of alternatives, assessment of economic losses that occur from the damage to the environment; design of environmental management and monitoring programs, and etc.

Keywords: *Environment, Environmental examination, human health, client, legal person, natural person, environmental standards, norms.*